



ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


2011

Ալավերդու բնապահպանական տեղեկատվական հասարակական (Օրհուս) կենտրոնում 2011 թ. իրականացվել է 77 միջոցառում՝ կենտրոնի նախաձեռնությամբ, ինչպես նաև այլ կազմակերպությունների, ՏԻՄ – երի եւ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ եւ կենտրոնի աջակցությամբ:

Միջոցառումներ	քանակը	Մասնակիցների թիվ
Մեմինար արդարադատության մատչելիություն	1	
Շնորհանդես	2	
Շաբաթօրյակ	1	
Ծառատունկ	2	
Աշխատանքային հանդիպումներ	28	
Էկոկրթական միջոցառումներ/դասընթացներ, էկոտոններ/	23	
Հանրային քննարկում	3	
Հասարակական լսում (Ալավերդու նոր աղբավայրի կառուցման նախագծի ՇՄԱԳ նախագծի վերաբերյալ)	1	
Այլ միջոցառումների մասնակցություն	14	
Փորձագետների խորհրդի նիստ	2	
ԸՆԴԱՄԵՆԸ	77	2072

Միջոցառման մասնակիցների միջին թիվը եղել է 25-30 հոգի:

Ամբողջ տարվա ընթացքում կենտրոնում կամավորների նախաձեռնությամբ պարբերաբար կազմակերպվել են ֆիլմերի ցուցադրություններ, նշվել են էկոլոգիական տոներ, տրամադրվել են ֆիլմեր տարբեր կազմակերպությունների, քաղաքացիների, նաև տեղական հեռուստաընկերությանը (հեռուստաընկերության հետ կենտրոնը ակտիվ համագործակցում է), կրթօջախներին և հասարակական կազմակերպություններին: Կենտրոնը ակտիվորեն մասնակցում է գլխավորում է տարածաշրջանում եվ համայնքում իրականացվող բոլոր դրամաշնորհային բնապահպանական ծրագրերի իրականացման գործընթացը՝ ավելին «Green Lane» ՀԿ-ի հետ հանդիսանում է ԵՄ աջակցությամբ՝ CENN, REC Caucasus –ի հետ համատեղ իրականացվող ծրագրի Հայաստանյան կոորդինատոր տարածաշրջանում: Կենտրոնի 12 կամավորներին միացել են եւս 2-ը, ովքեր իրենց կամավորական գործունեությունը իրականացնում են Ախթալա քաղաքում: Կենտրոնում հունիս ամսին ուսումնական պրակտիկան է անցկացրել Երեւանի Հյուսիսային համալսարանի 1 ուսանող: Կատարված բոլոր աշխատանքները լուսաբանվել են ՋԼՄ-ների միջոցով՝ մասնավորապես տեղական «Անկյուն գունարած 3» հեռուստաընկերություն, Հ1, hetq.am, Ազատություն ռադիոկայան: Կենտրոնը 2011թ ունեցել է 1841 այցելու, որոնցից 24 %-ը ՀԿ-ների ներկայացուցիչները, 44 %-ը՝ պատանիները ու երիտասարդները, 9 %-ը՝ ՏԻՄ ներկայացուցիչները, 12 %-ը՝ հասարակության ներկայացուցիչները, 11 %-ը՝ ՋԼՄ-ների ներկայացուցիչները: Այցելուներից



Կենտրոնի ծառայություններից օգտվել են ըստ հետևյալ դասակարգման՝

Կենտրոնի ծառայություններից օգտվել են	
Գրադարան	38 մարդ
Տեսադարան	43 մարդ
Տպիչ, պատճենահան, սկան	72 մարդ
Ինտերնետ կապ	51 մարդ
Համակարգչային ուսուցում	3 մարդ
Տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում	347

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի բոլոր միջոցառումներն անցկացվել են փորձագետների խորհրդի անդամների, կամավորների, ՀԿ-ների և ՏԻՄ ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ: Ամբողջ տարվա ընթացքում կատարվել է ուսումնասիրություն Լոռու մարզի հանքարդյունաբերական ոլորտում, արդյունաբերական և կենցաղային թափոնակուտակիչների ոլորտում: Հուլիս ամսից սկսվել է Ալավերդու լիցենզավորված աղբավայրի շինարարությունը, որի կառուցման համար կատարվող բոլոր աշխատանքները արվել են կենտրոնի և քաղաքապետարանի նախաձեռնությամբ: Այս տարի Ալավերդի է այցելել ԵԱՀԿ գլխաղասային կառույցի պատվիրակությունը՝ տեղում ծանոթանալու մկնդեղի վտանգավոր թափոնավայրի ուսումնասիրություններին, ինչի արդյունքում կարելու է կառույցի անվտանգ դարձնելու գործընթացը: Կենտրոնը շարունակում է իր համագործակցությունը տարբեր միջազգային կառույցների, ՋԼՄ-ների, ՀԿ-ների, ՏԻՄ-երի, մյուս Օրհուս կենտրոնների, բիզնես սեկտորի և այլ շահագրգիռ կառույցների հետ՝ շեշտը դնելով առաջնահերթ բնապահպանական խնդիրների ֆունդամենտալ լուծումների և էկոլոգիական անվտանգության կարելու վրա:

Ալավերդու Օրհուս կենտրոն
Համակարգող՝ Անուշ Էվոյան

Հեռ.՝ +374 253 2 41 12 , 374 91199324,
E-mail: info_alaverdi@aarhus.am, anushevoyan@rambler.ru